Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1707040949, 1707047320, 1707009813 որոշումներն անփոփոխ, իսկ գանգատն առանց բավարարման թողնելու մասին

<<01>> 12 2017թ. 17.4.33550 ք. Երևան

ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե. Կարապետյանս, ուսումնասիրելով քաղաքացի Լուիզա Գրիգորյանի դիմումը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Քաղաքացի Լուիզա Գրիգորյանը դիմումով հայտնել է, որ **OPEL** մակնիշի **35 MQ 623** համարանիշի տրանսպորտային միջոցը վարել է Գուրգեն Պաթոնյանը և խնդրել է նշված տրանսպորտային միջոցով կատարված իրավախախտումներով կայացված թիվ 1707040949, 1707047320, 1707009813 որոշումները վերահաստատագրել վերջինիս:

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գանգատը (բողոքը կամ հայցադիմումը) կարող է ներկայացվել վարչական ակտի հասցեատիրոջ կամ խախտում կատարած անձի կողմից և պետք է պարունակի խախտումը կատարած անձի անունը, ազգանունը, վարորդական վկայականի սերիան և համարը, բնակության վայրը, ինչպես նաև դրան պետք է կցվեն գանգատը ներկայացնող անձանց անձնագրերի և տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթղթի պատճենները: Եթե տրանսպորտային միջոցն օգտագործվում է գրավոր պայմանագրի հիման վրա, ապա գանգատին (բողոքին կամ հայցադիմումին) պետք է կցվի նաև պայմանագրի պատճենը:

Դիմումի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ դիմումատուն չի պահպանել վերոնշյալ իրավանորմով սահմանված պահանջները, մասնավորապես դիմումում չի նշվել վարորդի վարորդական վկայականի սերիան, չի կցվել տ/մ-ի հաշվառման վկայագրի, սեփականատիրոջ անձնագրի պատճենները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.1707040949, 1707047320, 1707009813 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատն առանց բավարարման:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրեն քով սահմանված կարգով և ժամկետներում:

3.Սույն որոշման օրինակն ուղարկել քաղաքացի Լուիզա Գրիգորյանին (ծանուցման հասցե՝ ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Շիրակի փ. 2. 115, բն. 96ա) և ՏՄՀԽԱ կենտրոն:

Ե. Կարապետյան